



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

30 հունվարի 2020թ. թիվ 78

Ա. ԲԱՅԱԴՅԱՆԻՆ, Է. ԴՈՒՄԻԿՅԱՆԻՆ, Ա. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
ԵՎ Վ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՍՄ/ԱՄ-2-2/1269-2020 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Թումանյանի ՍԱՏԳ ավագ մասնագետ Արմեն Բայադյանին, Տաշիրի ՍԱՏԳ ավագ մասնագետ Էլմիրա Դումիկյանին, Սպիտակի ՍԱՏԳ ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Աննա Ղազարյանին և Ստեփանավանի ՍԱՏԳ ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Վրույր Պողոսյանին ս/թ փետրվարի 3-ից 4-ը երկու օրով գործուղել ք.Երևան՝ սոցիալական դեպքի վարման տեղեկատվական համակարգի արդիականացված տարբերակի վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

2. Գործուղման հետ կապված ծախսերը վճարում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. հունվարի 30
ք.Վանաձոր